

խնդրանքին յօժարակամ գոհացում տալով, ինծի պատուիրեց որ հոս գամ, որպէսզի վերոյիշեալ վարժարանը բանալով, անոնց կամքը կատարեմ, եւ զգուշանամ որ հաւատքի միաբանութեան պատճառաւ ոչ մէկ հայ հեռանայ ուղղափառ Վեհութեանդ պատուէրներէն եւ կամ իր եկեղեցւոյն ծէսէն անցնի լատին ծէսին: Վասնզի թէպէտ ամբողջ Եկեղեցւոյ մարմինը մէկ է կաթողիկէ հաւատքի միութեան եւ միակ Պետին կամ Ընդհանրական Հովուին պատճառաւ, սակայն պարունակելով բազմաթիւ զանազան ազգեր եւ լեզուներ, ունի այլազան սովորութիւններ ծէսերու, ծոմերու եւ եկեղեցական արարողութիւններու, եւ բազմաթիւ մասնաւոր հովիւներ եւ պատրիարքներ, որոնք իբրեւ գլխաւոր անդամներ նոյն մարմնոյն, իրենց գլխուն հետ համաձայնելով, զայն կը կառավարեն, իւրաքանչիւրը սեփական ազգին բանաւոր եւ ուղիղ սովորութիւններուն համեմատ. եւ այս՝ չնորհալի դեղեցկութեանը համար Եկեղեցւոյն, որ, ինչպէս կ'ըսէ մարգարէն, պարուրուած է այլազանութեամբ: Ահա թէ ինչո՛ւ Մայքալոյն Քահանայապետին շատ հաճելի է, որ այս հայերը ամէն բանի մէջ հնազանդին Քեզի, իբրեւ իրենց անմիջական ուղղափառ Հովուին, եւ յարատեւն իրենց եկեղեցւոյն յատուկ ծէսերուն մէջ, յապաւելով սակայն սոսկ այն բաները, որոնք հակառակ են առաքելական կանոններուն եւ կաթողիկէ դաւանանքին, որպէսզի անոնցմով դարձեալ